



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՏԵՂԵԿԱՆՔ


2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՄԱՍՈՒԼԻ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողովը) ամենօրյա կտրվածքով իրականացնում է ՁԼՄ հրապարակումների մշտադիտարկում: Լրատվամիջոցների հրապարակումների վերլուծությունը Հանձնաժողովի գործունեության կարևոր լիազորություններից է, որը հնարավորություն է տալիս բացահայտել հանրային ծառայողների վարքագծում առկա հնարավոր խախտումները, կանխել կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնել հանրային հաշվետվողականության մակարդակը:

Այս համատեքստում, 2025 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից մամուլի հրապարակումների հիման վրա ուսումնասիրվել են Հանձնաժողովի իրավասության շրջանակներում առերևույթ խախտումներ պարունակող թվով 40 հրապարակումներ, որոնցից 33-ը վերաբերել են [հայտարարագրերին](#), 5-ը՝ [շահերի բախմանը](#), 2-ը՝ [վարքագծի կանոններին](#):



Վերոնշյալ հրապարակումների հիման վրա իրականացվել են հետևյալ գործողությունները.

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

1. [«Իջևան համայնքը 275 մլն դրամի գնումներ է կատարել ավագանու անդամներին փոխկապակցված ընկերություններից», Infocom.am, հունիսի 26, 2025 թ.:](#)

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Իջևանի համայնքապետարանը 2022-2025 թվականներին 193 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու անդամ Խաչատուր Աթաբեկյանի հոր՝ «Արտարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ: Համայնքապետարանը նույն ժամանակահատվածում ևս 79.8 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու մեկ այլ անդամի՝ Խաչատուր Համգյանի հետ փոխկապակցված «Խաչմիշ22ին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ու «Փառանձեմ Նազինյան» անհատ ձեռնարկատիրոջ հետ: Բացի դրանից, համայնքապետարանը 2024 թվականին համայնքի ավագանու անդամ Նաիրի Զանվելյանի հետ՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, կնքել է աշխատանքների ձեռքբերման պայմանագիր՝ 980 000 ՀՀ դրամ արժեքով:

Հրապարակման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է իրականացված գնումների ընթացակարգերի և համայնքի ղեկավարի շահերի բխման կարգավորումների համատեքստում:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Արթուր Ճաղարյանը՝ որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022-2024 թվականներին համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով «Արտարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է գնման չորս պայմանագիր: Իջևան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանի և համայնքի ավագանու անդամ Խաչատուր Աթաբեկյանի միջև, նույն կուսակցության անդամ լինելու հիմքով, առկա է քաղաքական կապ: Մինևնույն ժամանակ, Խաչատուր Աթաբեկյանը անձնական հարաբերություններով է կապված «Արտարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից և գործադիր մարմնի ղեկավար Արթուր Աթաբեկյանի հետ: Այդուհանդերձ, հաշվի առնելով պայմանագրերի կնքման ժամկետները, վարչական տույժ նշանակելու հիմքերը բացակայել են:

Հրապարակման մեկ այլ դրվագի ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել է, որ Արթուր Ճաղարյանը՝ որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022 թվականին և 2024 թվականին համայնքի կարիքների համար հիմնանորոգման աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է երեք գնման պայմանագիր: Արթուր Ճաղարյանի և Իջևան համայնքի ավագանու անդամ Խաչատուր Համզանի միջև առկա են քաղաքական հարաբերություններ՝ նույն կուսակցության անդամ լինելու հիմքով: Պայմանագրերի կնքման ժամանակահատվածում Խաչատուր Համզանը հանդիսացել է «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: Կնքված մեկ պայմանագրի դեպքում վերջինս հանդիսացել է նաև ընկերության միակ մասնակիցը:

Հրապարակման վերջին դրվագով պարզվել է, որ Արթուր Ճաղարյանը 2024 թվականին ծառայության գնման պայմանագիր է կնքել նաև Իջևան համայնքի ավագանու անդամ Նաիրի Զանվելյանի (անհատ ձեռնարկատեր) հետ: Վերջիններիս միջև ևս առկա է քաղաքական կապ՝ նույն կուսակցության անդամ լինելու հիմքով: Նախքան «Հանրային ծառայության մասին» օրենքում 2022 թվականի դեկտեմբերի 7-ին կատարված փոփոխություններն ուժի մեջ մտնելը՝ 2023 թվականի հունվարի 2-ը, պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը հիմնականում ներառում էր պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական կամ խնամիական կապերով կապված անձանց: Այդ համատեքստում, նշված ժամանակահատվածում համայնքի ղեկավարը համայնքի ավագանու անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձանց հետ կնքված պայմանագրերի մասով շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից՝ Արթուր Ճաղարյանն ունեցել է պարտավորություն «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Նաիրի Զանվելյան» Ա/Զ-ի հետ մեկական պայմանագրերի կնքման շրջանակներում Հանձնաժողով ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, ինչը, սակայն, չի կատարվել: Շահերի բախման վերաբերյալ կարգավորումները խախտելու հիմքով Արթուր Ճաղարյանի նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ և կիրառվել վարչական տույժ: Վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի՝ 2025 թվականի հուլիսի 21-ի ՎԻՎ/163/2025 որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://shorturl.at/duzIH>:

2. *[«Առաքիչը, որը այսօր վարչապետին արքնթեր ՊՎԾ պետ է դարձել, 133 հազար դոլարանոց տուն է գնել»](#), Hetq.am, հուլիսի 9, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Ռոմանոս Պետրոսյանը «Աբովյանի բազմագործառույթային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի նախագահին է, իսկ Ռոմանոս Պետրոսյանի կինը՝ Արմինե Պետրոսյանը, նույն ՊՈԱԿ-ում կազմակերպադաստիարակչական գծով փոխտնօրեն է աշխատում:

Հրապարակված նյութն ուսումնասիրվել է Ռոմանոս Պետրոսյանի շահերի բախման համատեքստում:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ Ռոմանոս Պետրոսյանը 2018 թվականի հունիսի 4-ից մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը զբաղեցրել է Կոտայքի մարզպետի, 2020 թվականի հուլիսի 30-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 9-ը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 10-ից սկսած և ուսումնասիրությունն ընդգրկող ժամանակահատվածում՝ ՀՀ պետական վերահսկողության ծառայության ղեկավարի պաշտոնները: Միաժամանակ՝ Ռոմանոս Պետրոսյանը հանդիսանում է «Աբովյանի բազմագործառնության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահը: Խորհրդի կազմը, առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա, հաստատվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Ընդ որում, խորհրդի կազմում Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանի թեկնածությունը հաստատվել է 2022 թվականի օգոստոսի 8-ին՝ որպես գործատուների ներկայացուցիչ (տվյալ դեպքում՝ թեկնածությունը ներկայացվել է Գործատուների միության կողմից՝ նախարարության հարցման հիման վրա), ուստի խորհրդի կազմում Ռոմանոս Պետրոսյանի թեկնածության առաջադրման ժամկետը չի համընկել Կոտայքի մարզպետի պաշտոնում նրա պաշտոնավարման ժամանակահատվածի հետ:

Մինևույն ժամանակ, Ռոմանոս Պետրոսյանի կինը՝ Արմինե Պետրոսյանը, «Աբովյանի բազմագործառնության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի փոխտնօրենի պաշտոնում նշանակվել է 2020 թվականի հուլիսի 22-ին՝ նախքան Ռոմանոս Պետրոսյանի՝ նույն ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդում ընդգրկվելը: Միաժամանակ, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազոր պետական մարմինը, հաստատության գործադիր մարմինը (տնօրեն) և խորհուրդը: Քննարկվող ՊՈԱԿ-ի պարագայում փոխտնօրենը չի հանդիսանում գործադիր մարմին, ուստի, վերջինիս աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում, նրա նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառում և կարգապահական տույժեր է նշանակում քոլեջի տնօրենը:

Թեև Արմինե Պետրոսյանի պաշտոնի ստանձնման պահին նրա ամուսինը՝ Ռոմանոս Պետրոսյանը զբաղեցրել է Կոտայքի մարզպետի պաշտոնը, այդուհանդերձ, ՊՈԱԿ-ի փոխտնօրենի նշանակման գործընթացում մարզպետն ի պաշտոնե չունի/չի ունեցել որևէ ներգրավվածություն, հետևապես Ռոմանոս Պետրոսյանի կողմից

հնարավոր շահերի բախման հարցի քննարկման հիմքեր առկա չեն: Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը:

3. «Արարատի համայնքապետարանը 674 մլն դրամի պայմանագիր է կնքել ավագանու անդամի եղբոր ընկերության հետ», *Hetq.am*, *հուլիսի 18, 2025 թ.*:

Համաձայն հրապարակման՝ Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի 3 փողոցների ասֆալտապատման նպատակով 2025 թվականի մայիսի 23-ին Արարատի համայնքապետարանը պայմանագիր է կնքել «Արարատ-ճանշին» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի արժեքը 115 մլն 716 հազար դրամ է: «Արարատ-ճանշին» ՍՊԸ-ի սեփականատերը Արարատ համայնքի ավագանու նախկին անդամ Սամվել Վարդանյանի եղբայր Ստեփան Վարդանյանն է: Սամվել Վարդանյանն ավագանու անդամ է ընտրվել 2021 թվականին: Ընդհանուր առմամբ, 2022-2025 թվականներին, երբ Սամվել Վարդանյանը ավագանու անդամ էր, Արարատի համայնքապետարանը նրա եղբորը պատկանող ընկերության հետ կնքել է 12 պայմանագիր, որոնց ընդհանուր արժեքը 674 մլն 690 հազար դրամ է:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Ասլան Ավետիսյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022-2025 թվականներին, Սամվել Վարդանյանի համայնքի ավագանու անդամ լինելու ժամանակահատվածում, «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է 11 գնման պայմանագիր: 2008 թվականից առայսօր ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը Ստեփան Վարդանյանն է, ով, համաձայն հրապարակման, ավագանու անդամ Սամվել Վարդանյանի եղբայրն է:

Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ թեև Ասլան Ավետիսյանը և Սամվել Վարդանյանը Արարատ համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու են առաջադրվել և ընտրվել միևնույն կուսակցության ընտրացուցակով, այդուհանդերձ, չեն հանդիսանում նույն կուսակցության անդամ: Ավելին, Ասլան Ավետիսյանն անկուսակցական է: Սամվել Վարդանյանը գործնական հարաբերությունների մեջ է գտնվում վերոնշյալ ընկերության հետ՝ որպես փոխտնօրեն:

Գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ Հանձնաժողովի կողմից գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ չեն արձանագրվել, ուստի Հանձնաժողովը հրապարակման առարկան քննարկել է միայն Հանձնաժողովին շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում:

Հաշվի առնելով այն, որ Ասլան Ավետիսյանը «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊ ընկերության հետ 2024 թվականի սեպտեմբերի 2-ին և 2025 թվականի մայիսի 23-ին համապատասխանաբար՝ թիվ «ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/20» և «ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/15» ծածկագրերով կապալալին աշխատանքների կատարման գնման

պայմանագրեր կնքելուց առաջ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, Հանձնաժողովը Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի նկատմամբ հարուցել է ՎԻՎ/175/2025 վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը:

Հանձնաժողովի՝ 2025 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությամբ արձանագրվել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն ապահովված չլինելու հանգամանքով պայմանավորված, կոլեգիալ մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/175/2025 գործով որոշում չի կայացվել:

4. «Վանաձորի ավագանու անդամներին փոխկապակցված ընկերությունները միլիոնավոր դրամների պայմանագրեր են կնքել համայնքի հետ», Infocom.am, սեպտեմբերի 12, 2025թ.:

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Վանաձորի համայնքապետարանը 2019-2025 թվականներին 260 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու անդամ Յանա Հովսեփյանի հոր՝ Հայկ Հովսեփյանի, «Վանտեխմատ» ՍՊ ընկերության հետ: 2020-2024 թվականներին համայնքապետարանը մոտ 1.4 մլրդ ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել «Ռ. Ղազարյան» ՍՊ ընկերության հետ, որի միակ մասնակից Ռիմա Ղազարյանը բարեկամական կապերի մեջ է գտնվում համայնքի ավագանու մեկ այլ անդամի՝ Հայկազ Մովսիսյանի հետ:

Հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվությունն ուսումնասիրության փուլում է:

5. «Արթիկ համայնքը 2022-2024 թվականներին 492 մլն դրամի գնում է կատարել ավագանու անդամի ղեկավարած ընկերությունից», Infocom.am, սեպտեմբերի 22, 2025թ.:

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրություն է նախաձեռնվել նաև «Infocom.am» լրատվական կայքի հրապարակման հիման վրա, որի համաձայն՝ Արթիկի համայնքապետարանը 2022-2024 թվականներին 492 միլիոն դրամի գնումներ է կատարել համայնքի ավագանու անդամ Արտակ Ռափյանի եղբորը՝ Պավլիկ Ռափյանին պատկանող «Այ Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից: Հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվությունն ուսումնասիրության փուլում է:

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Նախարար կա, դասագիրք չկա. կրթական տարվա խայտառակ սկիզբ տեսնումբերի 1-ին», Armlur.am, օգոստոսի 22, 2025 թ.:

Հրապարակման նույն առարկայի վերաբերյալ Հանձնաժողովը նաև ստացել է դիմում:

Համաձայն հրապարակման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը մամուլի ասուլիսի ընթացքում լրագրողների նկատմամբ դրսևորել է կոպիտ, ագրեսիվ ու վիրավորական վարքագիծ: Հանձնաժողովը հրապարակման առարկան քննության է առել վարքագծի կանոնների համատեքստում, մասնավորապես, Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրք 51-րդ կետի համատեքստում, ըստ որի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Հրապարակմամբ նկարագրված արարքի գնահատման շրջանակներում Հանձնաժողովն ուսումնասիրել է Ժաննա Անդրեասյանին տրված հարցերի և նրա ամբողջական պատասխանների բովանդակությունն ու ձևը, դրանց շրջանակներում՝ կոնկրետ արտահայտությունների իմաստն ու նպատակը: Հանձնաժողովն արձանագրել է, որ Ժաննա Անդրեասյանի կատարած արտահայտությունները, ինչպես իրենց բովանդակությամբ, այնպես էլ ձևով, չեն կրել անձնական վիրավորանքի բնույթ և հետապնդել են փաստերի ճշտման, հարցը հնչեցրած լրագրողի քննադատման կամ հնչեցված հարցի բնույթը գնահատելու նպատակ: Չնայած նրան, որ Ժաննա Անդրեասյանի խոսքի մի մասը կրել է կտրուկ կամ կոշտ երանգ, Հանձնաժողովը գտել է, որ այդ հանգամանքը բավարար չէ վարքագծի կանոնի առերևույթ խախտում արձանագրելու համար: Այսպես, Հանձնաժողովը արձանագրել է, որ սուր կամ անգամ սադրիչ բնույթի հարցեր հնչեցնելը լրագրողների մասնագիտական առաքելության մասն է, որը պետք է հարգանքի արժանանա պաշտոնատար անձանց կողմից: Միաժամանակ, նման հարցեր հնչեցնելով, լրագրողները պետք է ողջամտորեն ակնկալեն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք կարող են իրենց պատասխաններում կտրուկ, անգամ կոշտ լինել՝ բարեվարքության սահմանների պահպանմամբ, այն է՝ չկիրառելով անձնական բնույթի վիրավորանքներ, գոեհիկ արտահայտություններ, լրագրողի խոսքին խիստ անհամաչափ տոնայնություն և այլն:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովը նշված դեպքի վերաբերյալ ներկայացրած դիմումի հիման վրա ընդունել է վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում:

2. [«Արևմտյան արժեքները ծաղրող, հայհոյող, եվրոպացիներին չվստահող Վարդան Ղուկասյանը 2009-ին վստահել է ֆրանսիացիներին ու վիրահատվել Փարիզում, նաև՝ տուն գնել»](#), Civic.am, օգոստոսի 28, 2025 թ.:

Հրապարակման առարկայի վերաբերյալ Հանձնաժողովի ուսումնասիրությունն իրականացվել է նաև «tribune.am» լրատվական կայքի՝ 2025 թվականի օգոստոսի 25-ի՝ «Պիդառաստների խոսքը ասնավանի չի... Ռա՛դ եղեք, գիտենք ձեր սեքսուալնի վիճակը. Վարդան Ղուկասյան» վերտառությամբ հրապարակման հիման վրա, հասանելի՝ <https://shorturl.at/mePmP>:

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանը հարցազրույցի ընթացքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ենթադրաբար խտրական արտահայտություններ է կատարել: Հանձնաժողովը հրապարակումների առարկան քննության է առել վարքագծի կանոնների համատեքստում, մասնավորապես, Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրք 37-րդ կետի համատեքստում, ըստ որի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Կանոնագրքի 37-րդ կետով սահմանված՝ այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը ենթադրում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ատելության խոսքի գործածումից զերծ մնալու պահանջը:

Հրապարակումներով ներկայացված արարքի գնահատման նպատակով Հանձնաժողովն իմաստաբանական վերլուծության է ենթարկել Վարդան Ղուկասյանի գործածած բառերը՝ արձանագրելով, որ դրանցից որոշները վերաբերում են անձանց տարբեր խմբերի, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց, նրանց նկատմամբ աջակցություն կամ հանդուրժողականություն ցուցաբերող անձանց, եվրոպացիների՝ ընդհանուր կերպով, ինչպես նաև իրենց արտաքինով կամ այլ անձնական հատկանիշներով որոշակիորեն տարբերվող այլ անձանց և արտահայտում են նրանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք: Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրել է, որ Վարդան Ղուկասյանն իր խոսքով առերևույթ կերպով անհանդուրժողական

վերաբերմունք է դրսևորել անձանց խմբերի նկատմամբ՝ այդպիսով հանգեցնելով Կանոնագրքի 37-րդ կետի առերևույթ խախտման: Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է նշված դեպքի առթիվ հարուցել վարույթ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Հարկ է ընդգծել, որ Հանձնաժողովը որոշում է ավարտել հայտարարագրերի վերաբերյալ մամուլում արձանագրված անհամապատասխանությունների ստուգումը՝ առաջարկելով հայտարարագրերում կատարել ուղղում, երբ արձանագրվել են սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման այնպիսի դեպքեր, որոնք նախկինում Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում գնահատվել են որպես նվազ նշանակության խախտում (օրինակ՝ տվյալն այլ կերպ ներկայացված է եղել հայտարարագրում) և երբ փարատվել են գույքի, եկամուտների և կատարված ծախսերի օրինականության կամ արժանահավատության առնչությամբ Հանձնաժողովի կասկածները:

1. [«Վաղարշապատի քաղաքապետը 13.6 միլիոն դրամի պայմանագիր է կնքել սկեսրայրի հետ»](#), [Azatutyun.am](#), *փետրվարի 8, 2025թ.*:

Հրապարակման հիման վրա նախաձեռնվել է ստուգում Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի և Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանի Արամայիս Միրզոյանի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից որոշվել է՝ հայցել պարզաբանումներ և դրանք գնահատման առարկա դարձնել Հանձնաժողովում արդեն իսկ նախաձեռնված հայտարարագրերի վերլուծության ընթացքում մինչդեռ հանձնաժողովի հայցած պարզաբանումների չեն ներկայացվել, որի արդյունքում Հանձնաժողովը որոշել է գործի նյութերն ուղարկել Դատախազություն:

2. [«1 տարում 2 բնակարան՝ 85 մլն դրամով. որտեղից փոխքաղաքապետին նման գումարներ»](#), [Armlur.am](#), *սեպտեմբերի 10, 2024թ.*:

Հրապարակման մեջ նշված Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանից և նրա ընտանիքի անդամ Թամարա Ղարիբյանից հրապարակված փաստերի առնչությամբ Հանձնաժողովը հայցել է պարզաբանումներ: Ներկայացված պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների՝ լրացման կարգի խախտում հանդիսանալու փաստը և առաջարկել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում:

3. [«7 բնակավայրերի համայնքապետը միլիոնատեր է. ինչ ունեցվածք է հայտարարագրել Նորայր Սարգսյանը»](#), *Armlur.am*, սեպտեմբերի 20, 2024թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը իրականացրել է Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում որոշել է ավարտել ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը, ինչպես նաև առաջարկվել է կատարել ուղղում հայտարարագրերում:

4. [«Հորից՝ որդուն. Սպիտակի համայնքապետի ընտանիքը ժառանգաբար տնօրինում է «Հայփոստի» մասնաճյուղը»](#), *Mediafactory.am*, փետրվարի 24, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Լոռու մարզի Սպիտակի համայնքի ղեկավար Քաջայր Վորոտի Նիկողոսյանի ընտանիքի անդամների հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, որի ընթացքում հայցվել են պարզաբանումներ: Պարզաբանումների գնահատման արդյունքում որոշվել է ավարտել ուսումնասիրությունը և առաջարկել Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանություններից մեկի դեպքում իրավախախտման նվազ նշանակության (տվյալն այլ կերպ հայտարարագրված է), իսկ մյուսի մասով՝ վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները սպառված լինելու հանգամանքը:

5. [«Առանձնատներ, բնակարան, խոշոր կանխիկ գումար, 44 մլն դրամ եկամուտ. Ռուստամ Բաքոյանի և ծնողների ունեցվածքը»](#), *Oragir.news*, մարտի 7, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Ազգային ժողովի պատգամավոր Ռուստամ Բաքոյանի ընտանիքի անդամների հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի ընթացքում հայցվել են պարզաբանումներ: Պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը և Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկան առ այն, որ նույն գործարքի վերաբերյալ տվյալների՝ այլ կերպ հայտարարագրված լինելու պարագայում արարքը որակվում է նվազ նշանակության:

6. [«Բնակարաններ, հողամաս, մեքենա, 57 մլն կանխիկ, 9.6 մլն եկամուտ. Դավիթ Դանիելյանի ունեցվածքը»](#), *Oragir.news*, մարտի 27, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Դանիելյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ

արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում հայցվել են պարզաբանումներ, որից հետո Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները սպառված են, ինչպես նաև այն հանգամանքը, որ ստուգման արդյունքում չեն հայտնաբերվել այնպիսի փաստեր, որոնք կվկայեին, որ գույքի փոփոխությունը չի հիմնավորվում օրինական եկամուտներով:

7. «Անհամապատասխանություններ Երևանի ավագանու մի շարք անդամների հայտարարագրերում», Infocom.am, սեպտեմբերի 16, 2024թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է Երևանի ավագանու անդամ Լուսինե Սարգսյանի ընտանիքի անդամ Վահե Հայրապետյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ Հանձնաժողովը որոշել է հայցել պարզաբանում: Պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ առերևույթ առկա են համապատասխան հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական ներկայացված տվյալներ և նախաձեռնել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ: Վարույթի արդյունքում կիրառվել է վարչական տույժ՝ 200,000 ՀՀ դրամի չափով: Որոշումը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ [հետևյալ հղումով](#):

8. «Հարկային և մաքսային տեսուչների ստացած նվիրատվությունները հետազոծելի չեն. ԿԿՀ-ն նրանց հայտարարագրերը չի ուսումնասիրել», Infocom.am, հոկտեմբերի 23, 2024թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է ՊԵԿ Հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության պետ Արմեն Սաֆարյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, որի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ Հանձնաժողովը հայցել է պարզաբանումներ: Պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ ներկայացված պարզաբանման և հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

Հրապարակման հիման վրա իրականացվել է նաև ՊԵԿ Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության պետի տեղակալ Սուրեն Գալստյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել Սուրեն Գալստյանի ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:

9. [«Հարկային և մաքսային տեսուչների ստացած նվիրատվությունները հետազօծելի չեն. ԿԿՀ-ն նրանց հայտարարագրերը չի ուսումնասիրել»](#), Infocom.am, հոկտեմբերի 23, 2024թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է ՊԵԿ Ներքին աուդիտի վարչության հարկային մարմնի ներքին աուդիտի բաժնի գլխավոր հարկային տեսուչ Տիգրան Նարիմանյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ ներկայացված պարզաբանման և հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

10. [«Հարկային և մաքսային տեսուչների ստացած նվիրատվությունները հետազօծելի չեն. ԿԿՀ-ն նրանց հայտարարագրերը չի ուսումնասիրել»](#), Infocom.am, հոկտեմբերի 23, 2024թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է ՊԵԿ Համալիր հարկային ստուգումների վարչության ստուգումների թիվ 5 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Կարեն Մարգարյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ ներկայացված պարզաբանման և հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

11. [«Ուժային կառույցների ներկայացուցիչները խոշոր նվիրատվություններ են հայտարարագրում, որոնց ծագման աղբյուրը հետազօծելի չէ»](#), Infocom.am, հունվարի 13, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազ Արման Նիկողոսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

12. [«Ուժային կառույցների ներկայացուցիչները խոշոր նվիրատվություններ են հայտարարագրում, որոնց ծագման աղբյուրը հետազծելի չէ»](#), Infocom.am, հունվարի 13, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ Ստեփան Նազարյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

13. [«Ինչ ունեցվածք ունի Սամվել Վարդանյանի գործը քննող դատավոր Ժորա Զիչոյանը»](#), Armlur.am, ապրիլի 17, 2024 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Ժորա Զիչոյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է հայցել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովի կասկածները փարատվել են և Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը:

14. [«Հովիկ Ադազարյանը սխալ է. կարճաժամկետ պարտքը պետք էր հայտարարագրել»](#), Fip.am, ապրիլի 1, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Ադազարյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:

15. [«7 անշարժ գույք, 2 մլն անկանխիկ, 5 մլն կանխիկ, 25 մլն եկամուտ. Արենիի համայնքապետի և նրա կնոջ ունեցվածքը»](#), Oragir.news, ապրիլի 10, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական տույժ նշանակելու վաղեմության

Ժամկետները սպառված են, ինչպես նաև առաջարկվել է կատարել ուղղումներ համապատասխան հայտարարագրերում:

16. [«596 մլն դրամ նվիրատվություն՝ համայնքային պաշտոնյաներին»](#), Infocom.am, ապրիլի 11, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու անդամ Գնել Սուքիասյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:

17. [«596 մլն դրամ նվիրատվություն՝ համայնքային պաշտոնյաներին»](#), Infocom.am, ապրիլի 11, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու անդամ Ժակլին Հեքիմյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

18. [«596 մլն դրամ նվիրատվություն՝ համայնքային պաշտոնյաներին»](#), Infocom.am, ապրիլի 11, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն: Հանձնաժողովը 2025 թվականի սեպտեմբերի 30-ին, Վալոդյա Գրիգորյանի մահվան հիմքով որոշել է ավարտել ստուգումը:

19. [«Hummer-ը վաճառել եմ, Toyota Land Cruiser եմ առել. ԲՊ-ական համայնքապետը հերքում է, որ գործարքի դիմաց մեքենա է նվեր ստացել»](#), Oragir.news, ապրիլի 14, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն:

20. [«Հակոբ Արշակյանը չի հայտարարագրել համատեղ սեփականություն ամուսնացր»](#), News.am, ապրիլի 25, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Ազգային ժողովի նախագահի տեղեկալ Հակոբ Արշակյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել վերլուծությունը:

21. [«Մհեր Գրիգորյանը շուրջ կես մլն դոլարով «Արդշինբանկ»-ի պարտատոմսեր է գնել. ինչ է հայտարարագրել փոխվարչապետը»](#), Factor.am, մայիսի 28, 2024թ.:

Հանձնաժողովը՝ հաշվի առնելով այն փաստը, որ մինչև մամուլում կատարված հրապարակումը ընթացս իրականացվում էր Մհեր Գրիգորյանի հայտարարագրերի վերլուծություն՝ որոշել է հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանություններին անդրադառնալ վերլուծության շրջանակում և ավարտել ստուգումը:

22. [«Ինչ ունեցվածք է հայտարարագրել ԱԺ պատգամավոր Տիգրան Աբրահամյանը»](#), factor.am, ապրիլի 29, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Աբրահամյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը հայցել է պարզաբանում և ներկայացված պարզաբանումների գնահատման արդյունքում որոշել է ավարտել վերլուծությունը:

23. [«10 մլն եկամուտ, 10 մլն արժողությամբ թանկարժեք զարդ. ինչ է հայտարարագրել ՔՊ-ականը»](#), Medihub.am, հուլիսի 18, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Կարապետյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում, հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը, Հանձնաժողովը որոշել է ավարտել վերլուծությունը և առաջարկել է ներկայացնել ուղղման դիմում:

24. [«Աշտարակ համայնքը վերջին 3 տարում շուրջ 735 մլն դրամի գնում է կատարել ավագանու անդամի ընկերությունից»](#), Infocom.am, հունիսի 13, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու անդամ Արա Բաղդասարյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով վարչական վարույթի իրականացման սպառված լինելու հանգամանքը, ինչպես նաև առաջարկվել է ներկայացնել ուղղման դիմում::

25. [«Շոալյ նվեր՝ եղբորը, փոքր եկամուտ և խոշոր վարկային բեռ. ինչ է հայտարարագրել Կապանի ղեկավարը»](#), «Factor.am», մայիսի 9, 2025 թ.

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով հայտարարագրված և հրապարակմամբ արձանագրված տվյալների միջև անհամապատասխանության բացակայությունը:

26. [«Դատական իշխանության ներկայացուցիչները խոշոր նվիրատվություններ են հայտարարագրում, սակայն դրանց գումարի ծագման աղբյուրը հետազոծելի չէ»](#), *Infocom.am*, *ղեկտեմբերի 11, 2024թ.*:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է դատավոր Մհեր Պետրոսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

27. [«Քյարամյանի աշխատավարձն անցած տարի ավելացել է շուրջ 9 մլն դրամով. ինչ է հայտարարագրել ՔԿ նախագահը»](#), *Factor.am*, *հունիսի 6, 2024թ.*:

Հաշվի առնելով այն փաստը, որ մինչև մամուլում կատարված հրապարակումը Հանձնաժողովում իրականացվում էր Արգիշտի Քարամյանի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերի վերլուծություն, Հանձնաժողովը որոշել է հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանություններին անդրադառնալ վերլուծության շրջանակնում: Վերլուծության ընթացքում հայցվել են պարզաբանումներ և հիմնավորող փաստաթղթեր: Ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկայի համաձայն դիտվել են նվազ նշանակության ունեցող, միաժամանակ, սպառված են եղել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված՝ վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները, ուստի՝ Հանձնաժողովը որոշել է ավարտել վերլուծությունը:

28. [«596 մլն դրամ նվիրատվություն՝ համայնքային պաշտոնյաներին»](#), *Infocom.am* *կայք*, *ապրիլի 11, 2025թ.*

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի ավագանու անդամ Արտյոմ Գևորգյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, որի արդյունքում հայցվել են պարզաբանումներ: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում

Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ արձանագրված անհամապատասխանությունները Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ դիտվել են նվազ նշանակության, վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետները սպառված էին: Առաջարկվել է ուղղում կատարել համապատասխան հայտարարագրերում:

29. [«Դատական իշխանության ներկայացուցիչները խոշոր նվիրատվություններ են հայտարարագրում, սակայն դրանց գումարի ծագման աղբյուրը հետազոծելի չէ»](#), *Infocom.am*, դեկտեմբերի 11, 2024թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է դատավոր Արամ Թումեյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է պահանջել պարզաբանում: Պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ներկայացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կասկածները փարատվել են:

30. [«Քննիչ Յուրիկ Սարգսյանը հայտարարագիրը թերի է լրացրել»](#), *Armlur.am*, հուլիսի 11, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Յուրիկ Սարգսյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը:

31. [«24 մլն տարեկան եկամուտ, 2 բնակարան. Ի՞նչ է հայտարարագրել ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը»](#), *Armlur.am*, հուլիսի 5, 2025 թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ գույքի փոփոխությունը հիմնավորվում է պաշտոնատար անձի և իր կնոջ օրինական եկամուտներով:

32. [«Աշխատավարձից բացի Կոնցորյանի կինը այլ միլիոններ է ստանում «Հայփոստից»](#), *Armlur.am*, սեպտեմբերի 8, 2025թ.:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովը սկսել է Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Կոնջորյանի կնոջ՝ Շուշան Ալեքսանյանի հայտարարագրերի՝ հրապարակմամբ արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների ուսումնասիրություն, որի արդյունքում Հանձնաժողովը որոշել է ավարտել ստուգումը՝ հաշվի առնելով, որ անհրաժեշտ տվյալները սահմանված կարգով հայտարարագրվել են:

2025 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում կատարված ՁԼՄ հրապարակումներից 29-ով արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովն այժմ իրականացնում է ուսումնասիրություն, որոնց արդյունքները կհրապարակվեն հաջորդիվ հաշվետվությամբ: